Մեծերի կարծիքը Նար-Դոս մասին

Ավետիք Իսահակյան

«Նրա հոգին առաքինությունների բյուրեղացումն էր և մարդասեր, ընկերասեր, կարեկցող, ազնիվ և համեստ... Նար-Դոսի մեջ մարդը և գրողը իրարից անբաժան էին և իրար չժխտող»:

Իսահակյանը Նար-Դոսի վաստակը գնահատելիս ելնում է մի ընդհանուր սկզբունքից՝ գրականության հասարակական մեծ նշանակության ճանաչումից:

Ստեփան Զորյան

Նա ինձ հիշեցնում էր մեր հին գրիչներին, որ հանձն առած գործը կատարում են անձնուրաց և դրա համար նրան, հների լեզվով ասած, կարելի է կոչել իսկապես... հայ լեզվի, հայ խոսքի աշխատավոր:

Հովհաննես Թումանյան

Նար-Դոսը համարվում է հոգեբանական ռեալիզմի հետևորդ:

Նար-Դոսը մեծ հոգեվերլուծաբան է: Նար-Դոսը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ գեղարվեստական արձակի այն խոշոր դեմքերից է, որի ստեղծած գրական արժեքները այսօր էլ չեն կորցրել իրենց արդիական նշանակությունը: